ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԱՐ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

Գիտաժողովի հարգելի՛ հյուրեր, սիրելի՛ ներկաներ,

Հայաստանի Հանրապետությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունն այսօր նշում են դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը։

Մեր երկու երկրները, անցնելով պատմության բազմադարյա քառուղով և թրծվելով տարբեր փորձությունների խառնարաններում, այսօր աշխարհին են ներկայանում որպես քրիստոնեության և իսլամի օրինակելի երկխոսությամբ և փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտում համագործակցող պետություններ։

Անցնող երեսուն տարիները նշանավորվել են հայ-իրանական բազմատարր հարաբերությունների ընդլայնմամբ, նորանոր նվաճումներով ու կայուն փոխվստահությամբ։

Իրանի Իսլամական Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության կարևոր գործընկերն է քաղաքական, տնտեսական, գիտակրթական, մշակութային և այլ բնագավառներում։

Ուրախությամբ կարող ենք փաստել, որ Իրանը Հայաստանի արտաքին առևտրի գործընկերների շարքում շարունակում է զբաղեցնել առաջատար դիրքեր։ Այնուամենայնիվ, պետք է նշենք, որ Հայաստանի Հանրապետությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունն ունեն ավելի մեծ ներուժ՝ նոր թափ հաղորդելու մեր երկու երկրների սերտ և բարիդրացիական հարաբերությունների զարգացմանը։

Երկու պետությունների միջև բազմոլորտ համագործակցության կարևոր մաս են կազմում նաև գիտական կապերը հայ և իրանցի գիտնականների միջև։ Թերևս այս ոլորտում նույնպես առկա է դեռևս չիրացված հսկայական պոտենցիալ, որի ուղղությամբ պիտի ջանքեր գործադրենք։ Վստահ եմ, որ նմանօրինակ գիտաժողովները նոր խթան կարող են հանդիսանալ գիտակրթական հաստատությունների փոխգործակցության խորացման համար։

Լիահույս եմ, որ համատեղ ջանքերի շնորհիվ այսուհետ ևս հանձնառու կլինենք հայ-իրանական բարձր մակարդակի միջպետական հարաբերությունների խորացմանը, և մեր համագործակցության բազմաբովանդակ օրակարգն առավել կընդլայնվի՝ ի շահ մեր երկրների ժողովուրդների բարօրության և տարածաշրջանային հարատև խաղաղության։

Ամփոփելով՝ շնորհակալություն եմ հայտնում, այս խորհրդանշական միջոցառման կազմակերպիչներին և հետաքրքիր քննարկումներ մաղթում բոլոր մասնակիցներին։